ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասի 11-րդ ենթակետի և ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/9-Լ որոշմամբ հաստատված Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգի 5–րդ կետի պահանջներով,

Նկատի ունենալով ՀՀ կառավարության 2024թ. հունիսի 27-ի թիվ 990-Ն որոշմամբ հանրային պաշտպանության համար հատկացված լրացուցիչ միջոցների տրամադրումը, որի հիման վրա ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 2024թ. հուլիսի 2-ի թիվ 10/13-Լ որոշմամբ հանրային պաշտպանների հաստիքների քանակը ավելացվել է 15-ով՝ 2024թ. հուլիսի 1-ից սահմանվելով 84,

Հաշվի առնելով հանրային պաշտպանների հավելյալ հաստիքների տեղաբաշխման անհրաժեշտությունը և այդ առնչությամբ Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի առաջարկությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. 2024 թվականի հուլիսի 1-ից հանրային պաշտպանի **84 (յոթանասունչորս)** հաստիքները տեղաբաշխել հետևյալ կերպ՝
   1) Երևան քաղաքում՝ **40 (քառասուն)** հաստիք, որից 31 (երեսունմեկ) հաստիքը՝ քրեական մասնագիտացմամբ, իսկ 9 (ինը) հաստիքը՝ քաղաքացիական (վարչական) մասնագիտացմամբ.
   2) մարզերում՝ **44 (քառասունչորս)** հաստիք՝ համաձայն հավելվածի:

2. 2024 թվականի հուլիսի 1-ից ուժը կորցրած ճանաչել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 19.07.2022թ. թիվ 165-Լ որոշումը:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Սիմոն Բաբայան

04 հուլիս 2024թ.
թիվ 285-Լ
ք.Երևան

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահի
04.07.2024թ. թիվ 285-Լ որոշման

ՄԱՐԶԵՐՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ

№	ՀՀ մարզ	ՀՊԳ նստավայր	Հաստիքների բաշխում	Հաստիք-ների ընդ. քանակը	ՀՊ-ների քանակը	Գործունեության հիմնական վայր
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
1.	**Արագածոտն**	Աշտարակ	1 1 1 0,5 0,5 0,5	4,5	6	**մարզի բոլոր բնակավայրեր**
2.	**Արարատ**	Արտաշատ	1 0,5 0,5 0,5 0,5	5,25	9	**մարզի բոլոր բնակավայրեր**
		Մասիս	1 0,5 0,5 0,25			
3.	**Արմավիր**	Արմավիր	1 1 1 0,5 0,5	8	10	**մարզի բոլոր բնակավայրեր**
		Էջմիածին	1 1 1 0,5 0,5			
4.	**Գեղարքունիք**	Գավառ	0,5	4	7	**մարզի բոլոր բնակավայրեր**
		Սևան	1 0,5 0,5 0,5			
		Մարտունի	0,5 0,5			
5.	**Կոտայք**	Հրազդան	0,5 0,5	5	11	**մարզի բոլոր բնակավայրեր**
		Աբովյան	0,5 0,5 0,5 0,5 0,25			
		Եղվարդ	0,5 0,25			
		Չարենցավան	0,5 0,5			
6.	**Սյունիք**	Կապան	0,5 0,5 0,5	3	7	**մարզի բոլոր բնակավայրեր**
		Գորիս	0,5 0,5			
		Սիսիան	0,25 0,25			
7.	**Վայոց Ձոր**	Եղեգնաձոր	0,5 0, 5	1	2	**մարզի բոլոր բնակավայրեր**
8.	**Տավուշ**	Իջևան	0,5 0,5 0,5 0,5	3,25	7	**մարզի բոլոր բնակավայրեր**
		Դիլիջան	0,5 0,25 0,5			
9.	**Լոռի**	Վանաձոր	1 1 1 1 0,5 0,5 0,25	5,25	7	**մարզի բոլոր բնակավայրեր**
10.	**Շիրակ**	Գյումրի	1 1 0, 5 0,5 0,5 0,5 0,5 0,25	4,75	8	**մարզի բոլոր բնակավայրեր**
Ընդհանուր թիվը				**44**	**74**	